

ՏՈՐՔ ԴԱՎԱՅԱՆ

Centre National de la Recherche Scientifique (CNRS), Paris

ՆՈՐ ԱՌԱՆԵՐԵՆԻ (ԿՈՎԿԱՍԻ ԹԱԹԵՐԵՆԻ)
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ

Րևոլյուցիոնար փոփոխություն. Արդի հայագիտության եւ հայերենագիտության կարեւոր խնդիրներից մեկը նաեւ այն ազգագրական խմբերի, ցեղերի եւ նրանց լեզուների ու բարբառների ուսումնասիրությունն է, որոնք բնակվել կամ բնակվում են պատմական Հայաստանի տարածքում եւ ժամանակին հայկական քաղաքակրթության ազդեցության ոլորտներում գտնված հարեւան երկրամասերում: Հայտնի է, որ դեռեւս վաղ միջնադարից սկսած՝ Հայ Առաքելական Եկեղեցին իր վարդապետությունը տարածել է Մեծ Հայքից արեւելք եւ հյուսիս-արեւելք ընկած շրջաններում: Տեղաբնիկ ժողովուրդներն արդեն այդ ժամանակվանից են հայտնվել հայոց քաղաքակրթության ծիրում: Այդ իսկ պատճառով բազմաթիվ կրոնական, մշակութային ու լեզվական առնչություններ գոյություն ունեն հայերի եւ այդ ժողովուրդների միջեւ: Նշված խնդիրների հետազոտումը հատկապես հրատապ է դարձել Հայաստանի անկախանալուց հետո, երբ մեր պետությունը հանդես է գալիս որպես տարածաշրջանային ինքնուրույն խաղորդ: Այս դեպքում հայագիտությունը խաչվում եւ սերտորեն միահյուսվում է տարածաշրջանային գիտությունների՝ իրանագիտության, կովկասագիտության եւ այլ հարակից ուղղությունների հետ: Հետեւաբար, միանգամայն բնական է Հայաստանի գիտական մտքի ցուցաբերած հետաքրքրությունը մեր հարեւան հանրապետության տարածքում բնակվող այն փոքրամասնությունների հանդեպ, որոնց նախնիները դարեր առաջ մաս են կազմել հայկական քաղաքակրթության: Դրանցից են այսպես կոչված «կովկասի թաթերը», որոնք, ուտիների հետ միասին, այն բացառիկ ժողովուրդներից են, որ տակավին մինչեւ վերջին ժամանակներս իրենց դավանանքով մասամբ պատկանել են Հայ Առաքելական Եկեղեցուն:

Կովկասի թաթերները կամ նոր առաններենը նոր իրանական լեզուներից մեկն է: Նրանով խոսում կամ խոսել են հարավարեւելյան Կովկասի լեռնային շրջաններում, ինչպես նաեւ այդ տարածքին հարող՝ Կասպից ծովի առափնյա մասերում բնակվող որոշ ազգագրական խմբեր: Այդ խմբերի հիմնական բնակավայրերը ձգվում են Դերբենտ քաղաքից մինչեւ Բաքու՝ ներառյալ նաեւ Ապշերոնյան թերակղզին, իսկ արեւմուտքում հասնում են մինչեւ Գյոգչայ գետը: Նշված շրջատարածքը նախկինում մտնում էր պատմական Առան եւ Շիրվան երկրամասերի մեջ: Վերջերս մեզանում բավական ընդունված է այս լեզվով եւ նրա բարբառներով խոսող ազգագրական խմբերից մեկին անվանել «Կովկասի պարսիկներ», ինչը առավելապես պայմանավորված է քաղաքական նկատառումներով, թեեւ բերվում են նաեւ լեզվաբանական հիմնավորումներ:

Առանախոս ազգագրական խմբերը չեն ունեցել որեւէ ընդհանուր ինքնանվանում, ուստի եւ նրանց թաթ բնորոշումը զուտ պայմանականորեն է ընդունված ժամանակակից գիտության մեջ: Նմանապես նաեւ թաթերեն եզրույթն իր մեջ միավորում է այդ ազգագրական խմբերի զանազան բարբառների ամբողջությունը:

Այս լեզվի եւ նրա կրողների պատմությունը թաղված է դարերի մշուշում: Ենթադրություն կա, որ թաթախոս խմբերը Սասանյան ժամանակաշրջանից հարավարեւելյան Կովկասում հաստատված ռազմական ջոկատների մնացորդների հետնորդներն են: Ոչ մի գրավոր հավաստի վկայություն, սակայն, չկա «Կովկասի թաթերի» ծագման կամ, իբրեւ առանձին էթնիկ խումբ, ձևավորման վերաբերյալ: Այդ իսկ պատճառով նրանց լեզվի եւ բարբառների համակողմանի ուսումնասիրությունը ստանում է առավել առաջնային նշանակություն:

Նոր առաներենի լեզվական տարբերակները. «Կովկասի թաթերը», ըստ իրենց կրոնական պատկանելության, բաժանվում են երեք հիմնական ազգագրական խմբի՝ «մուսուլման-թաթեր», «հրեա-թաթեր» եւ «հայ-թաթեր»¹: Ըստ որում, մուսուլման-թաթերի մեջ կան թե՛ սուննիներ, թե՛ շիաներ, հրեա-թաթերը կրոնով հուդայական են, իսկ հայ-թաթերը Քրիստոնեական Առաքելական Եկեղեցու հետեւորդներ են: Թեեւ նշված երեք էթնո-դավանական խմբերը բոլորն էլ իրանախոս են (կամ էին), սակայն նրանց միջեւ, կրոնական ու ազգագրական տարբերություններից զատ, կան նաեւ զգալի

¹ Սույն հոդվածում այսուհետեւ հարավարեւելյան Կովկասի պատմագագրական խմբերի նշված երեք անվանումներն ու նրանց ընդհանուր անվանումը կրեթվեն առանց չափերունքի, չնայած որ դրանք զուտ գիտական պայմանական եզրեր են:

բարբառային տարբերություններ: Այնպես որ միանգամայն ընդունելի են գիտություն մեջ բավական տարածում գտած մոլեսուլման-թաթերեն, հրեա-թաթերեն եւ հայ-թաթերեն եզրույթները՝ որպես վերոնշյալ երեք խմբերից յուրաքանչյուրի լեզվի կամ ավելի ճիշտ՝ լեզվական տարբերակի անվանումներ²:

Այս երեք լեզվական տարբերակների գոյությունը հանդերձ՝ կարելի է խոսել մեկ ընդհանուր՝ «Կովկասի թաթերեն» լեզվի մասին, որը պատկանում է իրանական լեզուների արեւմտյան ճյուղին եւ որը, թյուրքերենի հետ միասին, Ի. դարի սկզբներին եւ դրան անմիջապես նախորդող ժամանակաշրջանում եղել է ժամանակակից Ադրբեջանի Հանրապետության (ԺԱՀ) տարածքում խոսվող երկու հիմնական լեզուներից մեկը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ թաթերեն պայմանական բառեզրի փոխարեն կարելի է օգտագործել առանքերեն եզրույթը, որն առավել ճշգրտորեն է արտացոլում Կովկասի թաթերի պատմաշխարհագրական ընդգրկումը:

Առանքերեն բառերը վկայված է միջնադարյան պատմագրության մեջ: Այսպես, օրինակ, արաբ հեղինակ Իբն-Հաուկալը (Ժ. դար) հաղորդում է, որ ներկայիս Իրանի Գիլան նահանգում ժամանակին բնակվող գել ժողովուրդը խոսում էր մի առանձին լեզվով, որն, ըստ Իբն-Հաուկալի բնորոշման, «գրաբեր էր թե՛ հայերենից, թե՛ պարսկերենից եւ թե՛ առանքերենից»: Ըստ էության, այստեղ արաբ հեղինակի կողմից հիշատակվում են Գիլանի հարեւանությունը խոսվող երեք հիմնական լեզուները:

Առանքերեն անվանումն ակնհայտորեն կազմված է Առան աշխարհագրական տեղանունից, որը հայերեն Աղուան-ք (Aḡuan-k') կամ անտիկ աղբյուրներին՝ Ἀλβανία երկրամասի իրանական անվանաձևն է: Իհարկե, մեզ հայտնի է՝ արդյոք Իբն-Հաուկալի հիշատակած առանքերենը կովկասյան լեզու էր, թե իրանական (տեսականորեն այն կարող էր լինել պարսկերենից տարբեր՝ այլ իրանական լեզու): Ընդհանրապես, քիչ հավանական է Ժ. դարում Առանի տարածքում կովկասյան որեւէ լեզվի համատարած գործածությունը, քանի որ արդեն Սասանյան տիրապետության վերջին տարիներին այդ երկրամասը բավական մեծ թափով իրանացվել էր:

Ամեն դեպքում աներկբա է, որ միջնադարյան պատմագրության մեջ հիշատակված առանքերեն լեզուն տարածված էր պատմական Առան երկրամասում, որը հենց մասամբ նույնական է նոր ժամանակներում Կովկասի թաթերի կողմից զբաղեցրած տարածքների հետ: Հետեւաբար, առնվազն

² V. Minorsky, Tāt, E. J. Brill's first encyclopaedia of Islam (1913-1936) edited by M. Th. Houtsman, A. J. Wensinck, H. A. R. Gibb, W. Heffening and E. Lévi-Provençal, 1987, v. 8, p. 699.

աշխարհագրորեն սխալ չի լինի, եթե ժամանակակից Կովկասում խոսվող, այսպես կոչված, թաթական բարբառները բնորոշենք որպես նոր առանձնիկ դրսևորումներ: Նրանց բարբառախմբերը համապատասխանաբար կարելի է կոչել մոսուլման-առանքներ, հրեա-առանքներ եւ հայ-առանքներ:

Թաթ եզրույթը. Թաթ բառեզրի ծագումը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է սելջուկյան արշավանքների ժամանակաշրջանին, այն է՝ ԺԱ.-ԺԲ. դդ.: Թյուրքական ցեղերն այս անվանումը տալիս էին բոլոր այն իրանական ժողովուրդներին, որոնց հանդիպում էին դեպի Մերձավոր Արևելք իրենց առաջխաղացման ճանապարհին: Թյուրքական բարբառներում թաթ եզրույթը բառացիորեն նշանակել է «նստակյաց, հողագործ»՝ իր մեջ պարունակելով քամահրական իմաստ:

Թաթ բառեզրի արհամարհական նշանակությունները երևում են հետևյալ թյուրքական ասացվածքներում. «Եթե թուրք ժանգոտում է՝ գործերը վատ են, եթե մարդը թաթ է դառնում՝ միայն հոգում է» կամ «թաթը՝ աչքի վրա, փուշը՝ արմատի»³: ԺԹ. դարում Շիրվանի թյուրքական ցեղերի ասացվածքներում էլ հստակ երևում է քոչվոր-թյուրքմենի (täräkämän) եւ թաթի (tat) հակադրությունը⁴: Նույն ժամանակաշրջանում, ըստ ուսաստանցի հեղինակ Բերեզինի, պարսից ժողովրդախոսակցական լեզվում թաթ բառը նշանակել է «երկչոտ, ամաչկոտ մարդ» (un homme timide), միջնդեռ թյուրքերենում այս բառը նշանակել է «խիզախ», իսկ որոշ դեպքերում նաեւ՝ «տգետ մարդ» (courageux et quelquefois un homme ignorant)⁵:

Սկզբնապես թաթ բնորոշումը տրվել է՝ ընդգծելու համար իրանական ժողովուրդների զանազան լեզուների անհասկանալի ու «աղավաղված» լինելը, այդ իսկ պատճառով նրա կազմությունը, փաստորեն, հար եւ նման է հունական βαρβαρος բառեզրին⁶: Ավելի լայն առումով թաթ բառը թյուրքական ցեղերի լեզվում նշանակել է «ոչ-թյուրք»⁷: Այս է պատճառը, որ թաթ անունով էթնիկ խմբեր հայտնի են եղել Ղրիմից մինչեւ Կենտրոնական

³ Ф. Д. Люшкевич, Термин “тат” как этноним в Средней Азии, Иране и Закавказье, Советская этнография, № 3, Май-Июнь, 1971, с. 26.

⁴ Н. Д. Калашев, Пословицы Ширванских татар, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 24, Тифлис, 1898, отдел 3, с. 15.

⁵ E. Berésine, Dialecte Tate, Recherches sur les dialectes Persans, Casan, 1853, p. 4.

⁶ Այլ լեզուներում հունարեն «բարբարոս» (բարբառո, անհասկանալի լեզվով խոսող) բառերի նմանությամբ կազմված այլ բառերի եւ դրանց քամահրական նշանակությունների զարգացման մասին տես L. H. Abrahamian, Armenian identity in a changing world, Costa Mesa, CA, 2006, p. 66-67:

⁷ C. E. Bosworth, Tāt, Encyclopédie de l’Islam, nouvelle édition (par P. J. Bearman, Th. Bianquis, C.E. Bosworth, E. van Donzel, W.P. Heinrichs), 2002, t. X, p. 395.

Ասիա եւ Անատոլիա ու Սիրիա ընկած հսկայական տարածքներում, ընդ որում այդ խմբերը հաճախ եղել են նաեւ ոչ-իրանախոս⁸:

Սա եւս մեկ փաստարկ է՝ հօգուտ «Կովկասի թաթերեն» եզրույթի փոխարեն առավել ճշգրիտ անվանում գործածելու: Բացի այդ, հպեաք է մոռանալ, որ թաթերեն պայմանական անունը տրվում է նաեւ ժամանակակից Իրանի Ղազվին քաղաքից հարավ եւ հարավ-արեւմուտք՝ Ռամանդի եւ նրա հարեւան շրջաններում խոսվող իրանական բարբառների խմբին: Իրանում թյուրքախոս տարածքների վրա կղզյակներով պահպանված այս իրանական բարբառները ներկայանում են որպես հին ազարի լեզվի շարունակություն, որը ԺԴ.-ԺԵ. դարերից սկսած համարվում է մեռած լեզու⁹:

«Նոր ազարի» անվանումը ստացած այս բարբառները լեզվաբանորեն առավել մոտ են իրանական «կասպյան» լեզուներին՝ թալիշերենին, գիլաքիին եւ մազանդարանին: Մինչդեռ «Կովկասի թաթերեն» իր քերականական կառուցվածքով հարում է պարսկերենին ու տալիկերենին: Հետեւաբար, եզրաբանական շփոթից խուսափելու համար՝ ավելի նպատակահարմար է Կովկասի թաթերենը (կոչված նաեւ հյուսիսային թաթերեն) անվանել նոր առանքեն, իսկ Իրանի թաթերենը (կոչված նաեւ հարավային թաթերեն)՝ նոր ազարի: Ըստ որում, նոր առանքենը պատկանում է իրանական լեզուների հարավարեւմտյան ճյուղին, իսկ նոր ազարին՝ հյուսիսարեւմտաիրանական ճյուղի «կասպյան» խմբին¹⁰:

Բառեզրերի ճշգրտումը նաեւ հնարավորություն է տալիս խուսափելու գայթակղությունից, երբ որոշ հեղինակների կողմից մեկ միասնական ժողովուրդ են համարվում Կովկասի թաթերը եւ Իրանի թաթերը: Այս մոտեցումը, որը զուրկ է որեւէ պատմագիտական կամ լեզվաբանական հիմնավորումից, առավել հայտնի է անցյալ դարի 80-ականներին լույս տեսած մի հոդվածով¹¹:

Այսպիսով, նոր առանքենը այն բարբառների ամբողջությունն է, որոնցով խոսել է ԺԱՀ բնակչության նշանակալից մասը՝ այդ տարածաշրջան թյուրքական բազմաքանակ ալիքի ներթափանցման անմիջապես նախորդող ժամանակաշրջանում: Ըստ էության, առանքեն լեզուն այդ ժամանակ

⁸ Անդ:

⁹ E. Yar-Shater, A Grammar of southern tati dialects, Mouton, the Hague, Paris, 1969, p. 7. G. Doerfer, Tati Lehnwörter im Chaldasch, Acta Iranica, vol. XVI, Leiden, 1990, S. 62.

¹⁰ «Jeremiás E. La langue Tāt», Encyclopédie de l'Islam, nouvelle édition (par P. J. Bearman, Th. Bianquis, C.E. Bosworth, E. van Donzel, W. P. Heinrichs), 2002, t. X, p. 396.

¹¹ Ж. Г. Голотвин, М.Е. Мататов, Таты, Вопросы истории, 1986, № 11, с. 185.

եղել է հարավարեւելյան Կովկասի գլխավոր հաղորդակցութեան լեզուն՝ lingua franca-ն, անշուշտ պարսկերենի հետ միասին:

Նոր առաներենի մասին առաջին հիշատակությունը եվրոպական աղբյուրում. Նոր առաներեն լեզվի վերաբերյալ առաջին հիշատակությունները հանդիպում են եվրոպացի ճանապարհորդի ուղեգրության մեջ: ԺԸ. դարավերջին լեհ ճանապարհորդ Յան Պոտոցկին, Աստրախանից Կովկաս մեկնելով, արժեքավոր տեղեկություններ է արձանագրել նոր առաներենի մասին: 1797 թ. հոկտեմբերի 5-ին Պոտոցկին հարավային Դաղստանից գրում է. «Այսօր ես հայրնագործեցի մի լեզու, որը խոսվում է Մուշկուրում՝ երկիր, ուր ժամանակին, ասում են, ասլուրում էին աֆղանները»¹²: Այստեղ Պոտոցկին, խոսելով իր հայտնագործած նոր լեզվի տարածման շրջանի մասին, Առանի կամ Կովկասյան Աղվանքի հնագույն բնակիչներին՝ աղվաններին, թյուրքիմացուրեն չփոխում է աֆղան-փուլտունների հետ:

Հաջորդ օրը Յան Պոտոցկին իր օրագրում նշում է. «Լեզուն, որի մասին խոսում էի երեկ, գործածվում է Ղուբայի եւ Շաբրանի միջեւ, Սամուր [գետից] այն կողմ: Դա պարզապես պարսկերենի մի բարբառ է: Այդ բարբառը կոչվում է թաթ: Ընդհանրապես, Պարսկաստանը բաժանվում է թյուրքերի եւ թաթերի [? - Տ. Դ.]: Թյուրքերը (Սելջուկյանների հետնորդները) բնակվում են Ադրբեջանում, իսկ թաթերը՝ Իրանում: Նույն թաթ բառից ծագում է տաջիկ բառը, որով Բուխարայի ուղեգրեկներն անվանում են տեղի բնիկներին: Մուշկուրի հայերը, «Աստված ինձ օգնական լինի՝» ասելու փոխարեն, ասում են «Խոդա թուկմեք բոչի» (Khoda toukmek bochi): Այս արտահայտություն մեջ Խոդա՝ Աստված բառը պարսկերեն է, իսկ մնացածը՝ թյուրքերեն»¹³:

Այն, ինչ վերաբերում է «թաթերեն» կոչված լեզվի կամ Պոտոցկու խոսքերով՝ «պարսկերենի մի բարբառ» տարածման սահմաններին, լրացուցիչ պարզաբանման կարիք չունի. այդ լեզուն գործածվում էր Ղուբայի եւ Շաբրանի միջեւ՝ Դաղստանի Սամուր (Սամուր) գետից այն կողմ: Քանի որ ակնհայտ էր այս լեզվի՝ իրանական ընտանիքին պատկանելը, Պոտոցկին այն անվանում է «պարսկերենի մի բարբառ»՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրանական պետությունն այդ ժամանակաշրջանում ղեկեւս պաշտոնապես կոչվում էր Պարսկաստան: Սակայն փոքր-ինչ անհասկանալի եւ նույնիսկ տարօրինակ է այն պնդումը, թե Պարսկաստանն ընդհանուր առմամբ բաժանվում է թյուրքերի եւ թաթերի, ընդ որում թյուրքերը բնակվում են

¹² J. Potocky, Voyage dans les steppes d'Astrakhan et du Caucase, t. 1, Paris, 1829, վերադասարկված՝ J. Potocky, Voyages au Caucase et en Chine (Introduction et notes de Daniel Beauvois), Paris, 1980, p. 90.

¹³ Ասդ:

Ադրբեջանում, իսկ թաթերը՝ Իրանում: Հավանաբար Պոտոցկին ցանկացել է ընդգծել պարսից տիրապետության տակ գտնվող բնակչության երկու մեծաթիվ՝ իրանախոս ու թյուրքախոս զանգվածների մասին: Խոսքը հատկապես վերաբերում է այն ժամանակվա Պարսկաստանի հյուսիսարևմտյան նահանգներին:

Ի տարբերություն այս անորոշ սահմանման, ուղղակի սխալ կամ հնացած տեսակետ պետք է համարել թաթ եւ լրաջիկ բառերի առնչությունը: Ծագումնաբանորեն սրանք բոլորովին տարբեր արմատներ են՝ տարբեր իմաստներով, թեեւ գործածության առումով երբեմն մոտեցվել են. համենայն դեպս, ուղբեկներն, ըստ երեւույթին, իրենց հարեւան նստակյաց իրանախոս բնիկներին անվանելով տաջիկ, այդ բառն օգտագործել են թաթ տերմինին շատ մոտ քամահրական իմաստով:

Հետաքրքրական է նաեւ Պոտոցկու՝ նշված մեջբերման վերջին նախադասությունը, որտեղ, փաստորեն, առաջին անգամ չրջանառության մեջ է դրվում նոր առաներենով զբանցված մի արտահայտություն՝ *xoda tukmek boši* «Աստված օգնական լինի (եղիր)»¹⁴: Ըստ Յան Պոտոցկու՝ այստեղ միայն *xoda* բառն է պարսկերեն, իսկ մնացածը թյուրքերեն է, սակայն իրականում իրանական է նաեւ *boši* բայը, ուստիեւ նախադասության ամբողջ քերականական կառուցվածքը իրանական է: Ուշագրավ է, որ այս նորառաներեն նախադասությունը Պոտոցկին վերագրում է «Մուշկուրի հայերին», որոնք հավանաբար պատկանում էին հայ-առաներեն բարբառով խոսող ազգագրական խմբին (հետագայում այսպես կոչված՝ հայ-թաթեր):

Պոտոցկին որոշ տեղեկություններ է հաղորդում նաեւ հրեա-թաթերի մասին. ըստ նրա՝ «Շիրվանի երկրագործ հրեաները նույնպես խոսում են թաթերեն, սակայն նրանք ունեն մեկ այլ լեզու էլ, որով խոսում են իրար մեջ, ինչպես որ ինձ հաղորդեց մի հայ, որի խոսքերից կազմեցի թաթերենի իմ բառացանկը»¹⁵: Դժվար է ասել, թե ինչ լեզու ի նկատի ունի Պոտոցկին, որով խոսում էին «Շիրվանի երկրագործ հրեաները» իրար հետ՝ բացի թաթերենից: Հնարավոր է, որ մի դեպքում խոսքը մուսուլման-առաներենի (որը Պոտոցկին կոչում է *tât*), իսկ մյուս դեպքում՝ հրեա-առաներենի մասին է. վերջինը, բնականաբար, գործածվում էր միայն այդ խմբի ներսում, իսկ առաջինը հաղորդակցության լեզու էր նաեւ այլ առանախոս ազգագրական խմբերի հետ շփման ժամանակ:

¹⁴ Պոտոցկու թարգմանությանը՝ «Աստված ինձ օգնական լինի»:

¹⁵ Անդ:

Ձի բացառվում նաեւ, որ նշված նախադասութեան մեջ կարող են անճշտութիւններ լինել, քանի որ Պոտոցկին անձամբ չի չփվել հրեա-թաթերի հետ եւ նրանց վերաբերյալ այս տեղեկութիւնները լսել է մի հայից: Վերջինս, ամենայն հավանականութեամբ, դավանանքով է եղել հայ՝ պատկանելով Հայ Առաքելական Քրիստոնեական եկեղեցուն: Սովորաբար Պոտոցկին հայ է անվանում հենց Առաքելական եկեղեցուն պատկանողներին՝ անկախ նրանց լեզվից, այսպես, օրինակ, նա խոսում է կալմիկների հարեւանութեամբ բնակվող քոչվոր «հայերի» մասին, որոնք զբաղեցնում էին մի քանի սակավաթիվ աուլներ եւ կազմում էին կալմիկ կոչված ուլուսը¹⁶: Այս հայերի լեզվի մասին Պոտոցկին ոչինչ չի գրում: Նույն ձեւով՝ իրեն թաթերենի վերաբերյալ տեղեկութիւններ հաղորդած հայի մասին Պոտոցկին ոչինչ չի գրում. արդյոք նա հայախոս էր, թե ոչ: Շատ հավանական է, որ այդ մարդը հայերեն չի իմացել եւ եղել է առանախոս, քանի որ նրանից է Պոտոցկին գրի առել իր «թաթերենի բառացանկը»:

Ցավոք, Ֆրանսիայում եւ Եվրոպայում մեզ չհաջողվեց պարզել՝ արդյո՞ք եվրոպացի ճանապարհորդը հետազայում հրատարակել է այդ բառացանկը (vocabulaire), թե այն մինչեւ այժմ գտնվում է որեւէ արխիվում:

Ռուսական աղբյուրները եւ արխիւները՝ նոր առաներենի վերաբերյալ. Նոր առաներենի վերաբերյալ բազմաթիվ հիշատակութիւններ կան նաեւ ռուսական աղբյուրներում եւ արխիւներում: Ռուսաստանի կողմից հարավային Կովկասի շրջանները գրավելուց հետո ռուս պաշտոնյաները մի շարք նկարագրական աշխատութիւններ են թողել այդ տարածքների վերաբերյալ: Սկզբնապես, որպես կանոն, դրանցում նոր առաներեն լեզուն կոչվում է ոչ թե թաթերեն, այլ թաթարերեն: Այսպես, Շիրվանի գավառները նկարագրելիս՝ ամեն անգամ նշվում է, որ դրանց բնակիչները խոսում են «թյուրքերեն՝ թաթարերենի եւ պարսկերենի հետ միասնաձայն»¹⁷: Որ «թաթարերեն» ասելով՝ ի նկատի է առնվում թյուրքերենից առանձին եւ պարսկերենից տարբեր իրանական մի լեզու, երեւում է այն գավառների նկարագրութիւններից, որոնց բնակչության զգալի մասը, ինչպես գիտենք հետագա աղբյուրներից, առանախոս էր. այդ գավառների, օրինակ՝ Մուշկուրի, Նիզավաթի, Ռուստովի եւ այլնի բնակիչների մասին ասվում է, որ նրանք խոսում էին «թյուրքերեն եւ թաթարերեն»¹⁸:

¹⁶ Անդ, էջ 85:

¹⁷ И. Г. Гербер, Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря, 1728 г., «История, география и этнография Дагестана 18-19 вв.», Москва, 1958, с. 85, 90, 92, 94, 98, 99.

¹⁸ Անդ, էջ 87, 89, 91, 93, 96, 97, 98, 100:

«Կովկասից այն կողմ գտնվող ռուսական տիրույթների տեսութայան» առաջին հատորում ուղղակի ասվում է, որ Շիրվանի, Շաքիի եւ այլ երկրամասերը մեծ մասամբ բնակեցված են թաթարներով՝ հայերի հետ միախառնված, ընդ որում՝ «թաթարների մեջ առկա է դավանական եւ լեզվական տարբերություն. կան մուսուլմաններ՝ սուննի եւ շիա, ոմանք խոսում են թյուրք բարբառով, ոմանք՝ թաթ (աղճատված ֆարսերեն)»¹⁹:

Ուշագրավ է այս աղբյուրի տեղեկատվության տարբերությունը նախորդ աղբյուրից, որն ավելի քան մեկ դարով հին է: Փաստորեն, ԺԸ. դարի առաջին կեսին դեռ ռուսները խուսափում էին «առանաբնակ» տարածքների բնակիչներին որեւէ էթնիկ բնորոշում տալուց եւ գերադասում էին նշել միայն նրանց գործածած երեք լեզուները՝ թյուրքերեն, «թաթարերեն» (= թաթերեն – Տ. Դ.), պարսկերեն: ԺԹ. դարի առաջին կեսին արդեն նույն տարածքների բնակիչները ռուսական աղբյուրներում կոչվում են «թաթարներ», նշվում է նաեւ նրանց հետ միասին բնակվող հայերի մասին: Ընդ որում «թաթարների» գործածած լեզուներից հիշատակվում են թյուրքերենը եւ թաթերենը, վերջինս, ըստ նույն աղբյուրի, «աղճատված» պարսկերեն (ռուսական աղբյուրում՝ ֆարսերեն) է: Ամենայն հավանականությամբ, նույն լեզուները գործածվում էին նաեւ «հայերի» կողմից, որոնք ժամանակակից գիտության մեջ կոչվել են «հայ-թաթեր»:

«Կովկասից այն կողմ գտնվող ռուսական տիրույթների» նկարագրության արդեն չորրորդ հատորում ասվում է, որ «Դերբենտի մուսուլմանները խոսում են թաթարերեն եւ թաթերեն, որոնցից առաջինը լայն գործածության մեջ է ոչ միայն մուսուլմանների, այլեւ հայերի ու հրեաների մեջ, որոնք ունեն իրենց սեփական լեզուները»²⁰: Այլ աղբյուրներից հայտնի է, որ նշված ժամանակաշրջանում Դերբենտի հայերն ու հրեաները չէին խոսում հայերեն կամ եբրայերեն, այնպես որ «իրենց սեփական լեզուների» տակ ռուսական աղբյուրն, ամենայն հավանականությամբ, ակնարկում է հայ-առաներեն եւ հրեա-առաներեն լեզուները: Իրանախոս այս խմբերի (հայ-թաթեր եւ հրեա-թաթեր) երկլեզվությունը պահպանվել էր ընդհուպ մինչեւ Ի. դարի 80-ական թվականները, իրենց «սեփական լեզուների» հետ մեկտեղ նրանք ազատ տիրապետում էին նաեւ թյուրքերենին (ռուսական վերոնշյալ աղբյուրում՝ թաթարերեն): Փաստորեն, ինչպես երեւում է, այդ

¹⁹ П. Вишеславцев, Н. Флоровский, В. Григорьев, Г. Гордеев, А. Яновский, Д. Зубарев, В. Легкобытов, Обзорение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, ч. 1-4, СПб., 1836, с. 25-26.

²⁰ Մոդ, էջ 168. Н. Волкова, О расселении армян на Северном Кавказе до начала XX в., ИФЖ, 1966, № 3, с. 268.

աղբյուրը «Թաթերեն» է անվանում միայն մոսկովման-առաներենը, իսկ հայ-առաներենն ու հրեա-առաներենը համարում է Դերբենտի հայերի եւ լեռնական հրեաների «սեփական լեզուներ»:

Ռուսական մեկ այլ աղբյուրում նշվում է, որ Շիրվանի թաթարների ու հայերի փոքր մասը խոսում է «աղճատված պարսկերենով» (на испорченном персидском)²¹. Խոսքը, հավանաբար, մոսկովման-առաներենի մասին է, որն ընդհանուր հաղորդակցության լեզու էր բոլոր առանախոս խմբերի միջև: Մեկ ուրիշ տեղ հիշատակվում է, որ Ղուբայի հայերն ու հրեաները խոսում են թաթերեն²². այստեղ նույնպես, ամենայն հավանականությամբ, ի նկատի է առնվում մոսկովման-առաներենը, թեեւ քիչ հավանականություն կա նաեւ, որ խոսքը վերաբերի հայ-առաներենին եւ հրեա-առաներենին. այս պարագային՝ անսովոր է միայն այդ երկու բարբառային տարբերակների հիշատակումը մեկ անվան տակ:

Հայ հեղինակները նոր առաներենի մասին. Ժ. Դարի վերջերին նկատվում է հայ պարբերական մամուլի հետաքրքրության աճ նոր առաներենի եւ նրա կրողների հանդեպ: 1871 թ. «Արարատ» հանդեսում Դանիել արքեպիսկոպոս Շահնազարյանը գրում է, որ Մադրասա գյուղի բնակիչները «խոսում են երկու լեզուաւ միմեանց հետ՝ հայերէն եւ թաթերէն»²³, իսկ «Մեղու Հայաստանի» թերթը նույն թվականին հաղորդում է, որ Քիլվար, Խաչմաս ու Կարաջալի գյուղերի հայերը չգիտեն հայերեն, իրար հետ խոսում են «աղավաղեալ պարսկերենով», իսկ ուրիշների հետ՝ թյուրքերեն:

Հայ-առաներենի մասին ավելի հանգամանալից տեղեկություններ է հայտնում Շամախի թեմի հոգեւոր առաջնորդ Մակար արքեպիսկոպոս Բարխուտարյանցը. 1893 թ. Թիֆլիսում լույս է տեսնում նրա «Աղվանից երկիր եւ դրացիք» մանրամասն եւ բովանդակալից ուղեգրությունը, որտեղ, առաջին անգամ հայ իրականության մեջ, նմուշներ են բերվում հայ-առաներեն լեզվից: Բարխուտարյանցն այս լեզուն կոչում է «լահճերեն» եւ համարում հին լինաց բարբառի մնացորդ. նա բերում է հայ-առաներենից հիսունութ բառ եւ զուգահեռ տալիս դրանց հայերեն թարգմանությունները²⁴:

²¹ «Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношении», ч. 1-4, СПб., 1836, с. 79:

²² Некоторые замечания на книгу Обозрение российских владений за Кавказом, СПб., 1840, с. 83.

²³ Դ. Շահնազարեան, Այցելութիւն եկեղեցեաց գիւորէից վիճակին Հայոց Շամախայ, «Արարատ», 1871, մարտ, էջ 352:

²⁴ Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք (միջին-Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 91-92:

Նոր առաներենի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների համառոտ փնտրություն. 1853 թ. Կազանում լույս է տեսնում Ի. Ի. Բերեզինի Ֆրանսերեն գիրքը՝ «Հետազոտություններ Պարսից բարբառների շուրջ» վերտառությամբ (Recherches sur les dialectes Persans), որում հեղինակը իրանական այլ լեզուների շարքում (թալիշերեն, գիլաքի, մազանդարանի, գյաբրի, քրդերեն) առաջին անգամ տալիս է նաև նոր առաներենի քերականական նկարագրությունը²⁵: Այս աշխատության՝ նոր առաներենին վերաբերող մասը, սակայն, մի քանի տասնամյակ անց հայտնված նոր ուսումնասիրությունների լույսի տակ այլևս բավական հնացած դարձավ²⁶: Բերեզինը նոր առաներեն լեզուն ուսումնասիրել է Բաքվում եւ չի էլ ենթադրել, որ գոյություն ունեն այդ լեզվի մի քանի տարբեր բարբառներ²⁷:

1860-1861 թթ. ձմռանը ակադեմիկոս Դորնը Բաքվում ուսումնասիրում է մոսուլման-առաներեն լեզուն, իսկ ավելի ուշ Ղուբայում եւ Դերբենտում գրի է առնում նմուշներ հրեա-առաներենից: Բաքվում Դորնը կազմում է նոր առաներեն լեզվի քերականական ակնարկ եւ գրանցում է բազմաթիվ բառեր ու խոսակցական դարձվածքներ: Այս նյութերից նա ընդգրկում է 1875 թ. լույս տեսած իր աշխատության մեջ, որը կոչվում էր «Դեպի Թաբարիստան հին ռուսների կատարած արշավանքների մասին»: Այս աշխատանքում, ցավոք, տեքստերի գրառումը բավական անհաջող է, քանի որ ընտրված է արաբատառ տառադարձման եղանակը²⁸:

Իր հավաքած նյութի մեծ մասը, սակայն, Դորնը չի հասցնում մշակել, եւ դրանք ձեռագիր տարբերակով պահվում են Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ասիական թանգարանում: Ինչպես Բերեզինի աշխատանքում, Դորնի գրքում եւս հատկապես թերի է տառադարձման խնդիրը, որը հստակ պատկերացում չի տալիս նոր առաներենի հնչյունական (մասնավորապես՝ ձայնավորական) համակարգի վերաբերյալ. այս մասին դեռեւս Ի. դարի առաջին կեսին նշել է հայտնի առանագետ Բորիս Միլլերը²⁹:

Ինչպես Դորնն ու Բերեզինը, այնպես էլ նոր առաներեն լեզվի հետազոտ ուսումնասիրողների մեծ մասն իրենց հիմնական ուղադրությունը սեւեռել են մոսուլման-առաներենին եւ հրեա-առաներենին՝ աչքաթող անելով հայ-

²⁵ E. Berésine, Dialecte Tate, Recherches sur les dialectes Persans, Casan, 1853, p. 4-55.

²⁶ «Очерк по истории изучения иранских языков», Москва, 1962, с. 133.

²⁷ E. Berésine, նշվ. աշխ., p. 4:

²⁸ «Dorn. Caspia. Über die Einfälle der alten Russen in Tabaristan», 1875 (Дорн. Каспии, СПб, 1875), S. 218.

²⁹ Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, Известия общества обследования и изучения Азербайджана, № 8, вып. VII, Баку, 1929, с. 24.

առաներենը: Ամբողջ ժԹ. դարում միայն 1894 թվականին է, որ «Կովկասի տեղավայրերի եւ ցեղերի նկարագրության համար նյութերի ժողովածուի» բազմապրակ շարքի 20-րդ թողարկման մեջ Լ. Լոպատինսկին հրատարակում է հայ-առաներենով երկու հեքիաթ, որոնք գրի էին առել Շամախու քաղաքային ուսումնարանի երկու աշակերտներ՝ Մադրասա գյուղում³⁰: Այս տեքստերը տպագրվում են Լոպատինսկու ծանոթագրություններով: Հենց նա էր, թերեւս, ով առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց հայ-թաթ եւ հայ-թաթերեն եզրույթները (армяне-таты и армяно-татский):

Նոր առաներենի մասին գրել է նաեւ Վ. Գալգերը՝ իրանական բարբառներին նվիրված իր գերմաներեն ուսումնասիրության մեջ, որը վերնագրված է «Կասպյան բարբառները»: Այս աշխատանքում Գալգերը ներառել է Բերեգինից, Դորնից եւ Լոպատինսկուց վերցված նյութը՝ նոր առաներենին վերաբերող: Այդ ժամանակ արդեն լույս էին տեսել Վ. Միլլերի արժեքավոր աշխատությունները, սակայն Գալգերը գրեթե չի օգտվել դրանցից³¹:

Նոր առաներենի վերաբերյալ ամենահիմնարար եւ նշանակալից հետազոտությունները, որոնք գրվել են ժԹ. դարի վերջին եւ Ի. դարի առաջին տասնամյակներին, պատկանում են հանրահայտ արեւելագետ Վսեվոլոդ Միլլերի գրչին: Վերջինս իր աշխատություններում անդրադառնում է հրեա-առաներենի³² եւ մուսուլման-առաներենի³³ հնչյունական ու քերականական կառուցվածքներին, ինչպես եւ բառային կազմերին, բերում է այդ լեզվական տարբերակներով գրի առնված մի շարք տեքստեր:

Խորհրդային շրջանում նոր առաներեն լեզվի խորազնին ուսումնասիրությունը, որ ձեռնարկել էր Վ. Միլլերը, շարունակում է նրա որդին՝ Բորիս Միլլերը: 1928 թ. ամռանը, «Ադրբեջանի ուսումնասիրման եւ հետազոտման ընկերության» հանձնարարությամբ, Բ. Միլլերը սկսում է նոր առաներենի խոսվածքների ու բարբառների հետազոտումը: Բ. Միլլերի սկզբնական

³⁰ Л. Лопатинский, Армяно-татские тексты, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XX, ч. II, Тифлис, 1896, с. 25-32.

³¹ W. Geiger, Die Kaspischen Dialecte, Grundriss der iranischen Philologie, Bd. I, Abt. 2, Strassburg, 1898-1901, S. 346-373.

³² В. Ф. Миллер, Материалы для изучения еврейско-татского языка, СПб., 1892. В. Ф. Миллер, Очерки морфологии еврейско-татского наречия, СПб., 1892. В. Ф. Миллер, Очерк фонетики еврейско-татского наречия, Москва, 1900 (Труды по востоковедению, издаваемые Лазаревским Институтом Восточных Языков, выпуск III), В. Ф. Миллер, О семитском элементе в татском наречии горских евреев: Древности восточные. Труды восточной комиссии Московского археологического общества, том 2, вып. 3, Москва, 1903.

³³ В. Ф. Миллер, Татские этюды, часть 1, Тексты и татско-русский словарь, Москва, 1905. В. Ф. Миллер, Татские этюды. часть 2, Опыт грамматики татского языка, Москва, 1907.

նպատակը առանական (թաթական) գիր ստեղծելն էր³⁴։ Նա մեկնում է Ղուբա, Շամախի, Ապշերոնյան թերակղզի եւ բազմաթիվ նյութեր հավաքում, որոնք հրատարակվում են Բաքվում 1929 թ.՝ «Թաթերը, նրանց տեղաբաշխումը եւ խոսվածքները» վերնագրով³⁵։ Իր գրի առած նորառանական տեքստերը, որոնք հիմնականում հեքիաթներ ու անեկդոտներ էին, Բ. Միլլերը հրատարակում է ավելի ուշ՝ 1945 թ. «Իրանական լեզուներ» ժողովածուի մեջ³⁶։

Նոր առաներեն լեզվի վերաբերյալ մինչ այժմ հրատարակված ամենամբողջական ու համապարփակ ուսումնասիրությունը, սակայն, մնում է 1963 թ. Լենինգրադում լույս տեսած՝ Ա. Լ. Գրյունբերգի «Հյուսիսադրեջանական թաթերի լեզուն» աշխատությունը³⁷։ Այն պարունակում է նաեւ Ա. Գրյունբերգի՝ առաներեն լեզվի վերաբերյալ գրած մյուս գիտական հետազոտությունների գրեթե բոլոր հիմնական տվյալներն ու դրույթները։ Գրյունբերգի գրքերն ու հոդվածները, ինչպես եւ Բորիս Միլլերինը, վերաբերում են նոր առաներեն լեզվի՝ խոսողների քանակով ամենամեծաթիվ բարբառախմբին՝ մոսուլման-առաներենին։ Ըստ որում, Գրյունբերգն իր աշխատությունը գրել է հիմնականում հյուսիսառանական բարբառների տվյալների հիման վրա³⁸։

Այդ հյուսիսառանական բարբառներից հատուկ Ղոնադքենդի բարբառի ուսումնասիրությամբ է զբաղվել Մ. Ի. Հաջիեւը, որն իր աշխատանքը 1966 թ. Բաքվում պաշտպանել է որպես թեկնածուականատենախոսություն։ Հետագայում՝ 1971-ին, լույս է տեսել նրա մենագրությունը՝ նվիրված նոր առաներեն լեզվի Ղոնադքենդի խոսվածքին³⁹։ Ավելի ուշ Հաջիեւը առավել ծավալուն մենագրություն է հրատարակել՝ նվիրված նոր առաներեն լեզվին⁴⁰, իսկ մեկ տարի անց Ն. Բ. Ջաֆարովայի հետ միասին մի գրքույկ է լույս ընծայել նոր առաներեն լեզվով՝ «Թաթերեն լեզուն» վերտառությամբ⁴¹։

³⁴«Очерк по истории изучения иранских языков», Москва, 1962, с. 141.

³⁵Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, Известия общества обследования и изучения Азербайджана, № 8, вып. VII, Баку, 1929.

³⁶Б. В. Миллер, Татские тексты, Материалы по говорам татов Советского Азербайджана, Иранские языки, I, Москва-Ленинград, 1945, с. 107-127.

³⁷А. Л. Грюнберг, Язык североазербайджанских татов, Ленинград, 1963.

³⁸А. Л. Грюнберг, О месте татского среди иранских языков, Вопросы языкознания, 1961, № 1, с. 106-114. А. Л. Грюнберг, Л. Х. Давыдова, Татский язык, Основы иранского языкознания: новоиранские языки (западная группа, прикаспийские языки), Москва, 1982, с. 231-287.

³⁹М. И. Начыјев, Тат дилинин Ғонағкәнд ләһчәси, Бакә, 1971.

⁴⁰М. I. Hacıev, Azərbaycan tatlarınin dili, Bakı, 1995.

⁴¹N. B. Cəfərova, M. I. Hacıev, Zuhun tati, Bakı, 1996.

Մեկ այլ հետազոտող՝ Գ. Հուսեյնովան, իր ուսումնասիրությունները սկսել է նոր առանքներն լեզվի Լահիջի բարբառի հետազոտմամբ⁴², հետագայում նաեւ մի շարք հոգվածներ է հրապարակել նոր առանքների կրած ազդեցությունների եւ նոր առանքներին առնչվող այլ նյութերի շուրջ, իսկ վերջերս հրատարակվել է Հուսեյնովայի աշխատանքը՝ նվիրված նոր առանքներն ու խոսող մոսուլման բնակչության լեզվի բառապաշարին⁴³:

Հրեա-առանքների կամ այսպես կոչված «ջուհուրի» վերաբերյալ մի շարք աշխատությունների հեղինակ է կովկասագետ Ժիլ Օթինեն⁴⁴, ով մի քանի տարի շարունակ դաշտային աշխատանքներ է իրականացրել ԺԱՀ ազգային փոքրամասնությունների գյուղերում: Մասնավորաբար, նա պաշտպանել է հրեա-առանքների քերականության մասին դոկտորական ատենախոսություն, որն առանձին մենագրությամբ հրատարակվել է 2012-ին⁴⁵: Ժ. Օթինեն անդրադարձել է նաեւ մոսուլման-առանքների որոշ քերականական հարցերի⁴⁶: Հրեա-առանքների վերաբերյալ աշխատանքներից հիշատակելի են նաեւ մի շարք բառարաններ, որոնք լույս են տեսել Դադաստանում. մեզ հայտնի վերջին նմանատիպ բառարանը հրատարակվել է 2005-ին⁴⁷:

Ի. դարի կեսերին իր առանձին հետազոտողին գտավ նաեւ հայ-առանքները, որը Խորհրդային Հայաստանում ուսումնասիրության արժանացավ Սերգեյ Ղալթախյանի կողմից: Վերջինս, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի հանձնարարությամբ, 1953 թվականից սկսած՝ մի քանի անգամ այցելեց Շամախու շրջանի Մադրասա գյուղը, իսկ 1963 թ. մեկ անգամ՝ Դիվլիջիի շրջանի Քիլվար գյուղը⁴⁸: 1957 թ. Ս. Ղալթախյանը մի հոգված հրապարակեց հայ-

⁴² G. Hüseyinova, *Lahic tatlarinin dili*, Baki, 2012.

⁴³ G. Hüseyinova, *Tat dili leksik fondunun genealoji təhlili* (Azərbaycan tatlarinin dilinin materialları əsasında), Baki, 2013.

⁴⁴ G. Authier, Tat in: Peter O. Müller, Ingeborg Ohnheiser, Susan Olsen, Franz Rainer (eds.) *Word-Formation. An International Handbook of the Languages of Europe*, Berlin-New York. De Gruyter, XVI. Word-formation in the individual European languages – Indo-Iranian, p. 3112-3129.

⁴⁵ G. Authier, *Grammaire juhuri, ou judéo-tat, langue iranienne du Caucase de l'est*, Wiesbaden, 2012.

⁴⁶ G. Authier, New strategies for relative clauses in Azeri and Apsheron Tat, in Volker Gast and Holger Diessel (eds.), *Clause Linkage in Cross-Linguistic Perspective: Data-Driven Approaches to Cross-Clausal Syntax*, Berlin-New York, p. 225-251.

⁴⁷ Э. Изгияева, *Татский язык горских евреев Кавказа (татско-русский и русско-татский словари около 20.000 слов)*, Махачкала, 2005.

⁴⁸ Ս. Ղալթախյան, Մադրասայի թաթերն լեզուն (ատենախոսություն), Երևան, 1972, էջ 9:

առաներենի Մադրասայի խոսվածքի մասին⁴⁹, իսկ տասնհինգ տարի անց պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն՝ «Մադրասացիների թաթերեն լեզուն» վերնագրով: Սա, թերեւս, հայ-առաներեն լեզվին նվիրված միակ աշխատությունն է (թեեւ արդեն հնացած)⁵⁰՝ առանձին քերականական բաժնով ու բառարանով: Այն ցույց տվեց, որ հայ-առաներենն իր բառապաշարով ու քերականական կառուցվածքով էական տարբերություններ ունի հրեա-առաներենից եւ մուսուլման-առաներենից⁵¹: Նույն հեղինակը փորձեց անդրադառնալ նաեւ հայ-առաներենի վրա հայերենի թողած ազդեցությունը⁵¹:

Նոր առաներենի բարբառների դասակարգումը. Հաճախ, տարածված ավանդական տեսակետի համաձայն, նոր առաներեն լեզուն մտցվում է նույն աշխարհագրական խմբի մեջ, ինչ որ Կասպյան լեզուները՝ գիլաքին, մազանդարանին, թալիշերենը, նաեւ՝ ազարին ու սեմնանին: Այս տեսակետին են հետեւում Վ. Գայգերը եւ Պ. Լըքոքը⁵²: Հավանական է համարվում նաեւ այն մոտեցումը, որ նոր առաներենը միջանկյալ դիրք է զբաղեցնում կասպյան լեզուների եւ կենտրոնական իրանի բարբառների միջեւ⁵³: Սակայն Լ. Գրյունբերգը իր մանրազնին հետազոտությունում հակվել է այն մտքին, որ նոր առաներեն լեզուն առավել մոտ է պարսկերենին ու տալիկերենին, այսինքն՝ այն կարելի է համարել հարավարեւմտյան նոր իրանական լեզու⁵⁴:

Նոր առաներենի գիտական ուսումնասիրության հենց սկզբից հետազոտողները նկատել են մուսուլման-առաներենի եւ հրեա-առաներենի բարբառային տարբերությունները: Դրանք հատկապես ցայտուն դրսևորվել են այդ բարբառախմբերի հնչյունաբանության մեջ, որն էլ հենց դարձել է հատուկ ուսումնասիրության առարկա⁵⁵: Թեեւ հայ-առաներենը մինչեւ 1957 թ. հատուկ հետազոտության չի ենթարկվել, սակայն դեռեւս Վ. Միլլե-

⁴⁹ Ս. Ղալթախյան, Համառոտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին, ՏՀԳ, 1957, թ. 4, էջ 85-96:

⁵⁰ Ս. Ղալթախյան, Մադրասացիների թաթերեն լեզուն (ատենախոսություն), Երևան, 1972, էջ 9:

⁵¹ Ս. Ղալթախյան, Հայերենի տարրերը հայ-թաթերեն բարբառում, ԼՀԳ, 1970, թ. 3, էջ 72-77:

⁵² W. Geiger, Die Kaspischen Dialecte, Grundriss der iranischen Philologie, Bd. I, Abt. 2, Strassburg, 1898-1901, S. 346-348. P. Lecoq, Les dialectes Caspiens et les dialectes du Nord-ouest de l'Iran, Compendium Linguarum Iranicarum, Wiesbaden, 1989, p. 296.

⁵³ V. Minorsky, Tāt, E. J. Brill's First Encyclopaedia of Islam (1913-1936) edited by M. Th. Houtsman, A. J. Wensinck, H. A. R. Gibb, W. Heffening and E. Lévi-Provençal, 1987, vol. 8, p. 699.

⁵⁴ А. Л. Грюнберг, О месте татского среди иранских языков, Вопросы языкознания, 1961, №1, с. 106-107.

⁵⁵ В. Ф. Миллер, Очерк фонетики еврейско-татского наречия, Москва, 1900.

րը իր «Թաթական ուսումնասիրություններում» նշում է, որ հայ-առաներենը, չփման շատ եզրեր ունենալով նորառանական մյուս բարբառների հետ, ունի նաեւ իր ինքնուրույն բնորոշիչ գծերը, որոնցով այն հատկանշվում, առանձնանում է թե՛ հրեա-առաներենից, թե՛ մուսուլման-առաներենից⁵⁶:

Բ. Միլլերը նույնպես խոսում է առանձին հայ-առաներեն, մուսուլման-առաներեն եւ հրեա-առաներեն լեզվական տարբերակների մասին: Սակայն նա գտնում է, որ ընդհանուր նորառանական բարբառների եւ խոսվածքների միջեւ նշանակալից տարբերություններ չկան⁵⁷: Սա հատկապես ճիշտ է հրեա-առաներենի վերաբերյալ, որի մեջ, ի դեպ, առանձնացվում է միայն երկու բարբառ: Մինչդեռ մուսուլման-առաներենի բարբառներն ու խոսվածքները հնչյունական տեսանկյունից բավականին ոչ-միատարր են եւ դրսեւորում են զգալի տարբերություններ⁵⁸:

Նոր առաներենի մեջ Բ. Միլլերի կողմից առանձնացվում է յոթ բարբառ. 1) հյուսիս-հրեա-առանական (հյուսիսային Կովկասի հրեա-թաթերի խոսվածքները), 2) հարավ-հրեա-առանական, որի մեջ առանձնացվում են Դերբենտի եւ Ղուբայի հրեա-թաթերի խոսվածքները⁵⁹, 3) Ապշերոնի, որի ներսում առանձնացվում են Բալախանիի, Սուրախանիի եւ այլ խոսվածքներ, 4) Խիզի, որը համեմատաբար քիչ է ուսումնասիրվել, 5) Ղուբայի մուսուլման առանախոս բնակչության խոսվածքները, 6) Շամախու շրջանի խոսվածքներ, որոնցից հատկապես լավ է հետազոտվել Լահիջ գյուղի խոսվածքը, 7) հայ-առանական խոսվածքներ, որոնցից մնացել էին ընդամենը երկուսը՝ Մադրասայի եւ Քիլվարի⁶⁰:

Նշված բարբառային դասակարգման մեջ հրեա-առաներենի առաջին խմբի՝ հյուսիս-հրեա-առանական խոսվածքները ուսումնասիրության են ենթարկվել առավելապես Վ. Միլլերի կողմից, իսկ երկրորդ խմբի, այսինքն՝ հարավ-հրեա-առանական խոսվածքները հետազոտվել են նրա որդու՝ Բ. Միլլերի կողմից:

Ինչ վերաբերում է հայ-առանական խոսվածքներին, փաստորեն, թյուր է «Ակնարկ իրանական լեզուների ուսումնասիրման պատմության» ժողովածոում հայտնված այն միտքը, թե իբր Բ. Միլլերը հայ-առաներենը համարում է մուսուլման-առաներենի բարբառներից մեկը՝ մուսուլման-առա-

⁵⁶ В. Ф. Миллер, Татские этюды, ч. 2, Опыт грамматики татского языка, Москва, 1907, с. 7.

⁵⁷ В. В. Миллер, Таты, их расселения и говоры, Баку, 1929, с. 11.

⁵⁸ В. С. Соколова, Татский язык, Очерки по фонетике иранских языков, ч. 1, Москва-Ленинград, 1953, с. 123.

⁵⁹ В. В. Миллер, Таты, их расселения и говоры, с. 18.

⁶⁰ Ասդ, էջ 28-29:

ներենի մեջ առանձնացնելով հետեւյալ հինգ բարբառները՝ Ապշերոնի, Խիզիի, Ղուբայի, Շամախու եւ հայ-թաթական⁶¹: Իրականում նա, խոսողների փոքր քանակի պատճառով, հայ-առաններենը չի բաժանում առանձին բարբառների եւ ընդհանուր նորառանական բարբառների դասակարգման մեջ այս լեզվական տարբերակը ներկայացնում է որպէս առանձին խոսվածքների խումբ: Բ. Միլլերն ինքն էլ հետազայում նշում է, որ հայ-առանական երկու գյուղերի խոսվածքները ինքը պարզապէս կցել է մուսուլման-առաններենի բարբառներին⁶²:

Ավելի ուշ ուսումնասիրողներից Վ. Սոկոլովան եւ Լ. Գրյունբերգը խոսում են նոր առաներեն լեզվի միայն երկու լեզվական տարբերակների մասին՝ մուսուլման-առաններեն եւ հրեա-առաններեն, վերջինս նշում է, որ հայ-առաններենը կամ «քրիստոնյա թաթերի լեզուն» հարում է մուսուլման-առաններենին եւ խոսվում է ընդամենը երկու գյուղում՝ Մադրասա ու Քիլվար⁶³: Փաստորեն, հաշվի առնելով հայ-թաթերի՝ արդեն փոքրաթիվ լինելը եւ նրանց՝ առանձին կղզյակներով տեղաբաշխումը մուսուլման-թաթերով բնակեցված շրջաններում, Ա. Գրյունբերգը հայ-առաններենը չի առանձնացնում որպէս ինքնուրույն լեզվական տարբերակ: Նույն մոտեցումն առկա է նաեւ այլ ուսումնասիրողների մոտ⁶⁴:

Մուսուլման-առաններենի բարբառներից ուսումնասիրելով միայն հյուսիսայինները՝ Ա. Գրյունբերգը Խիզիի եւ Ղուբայի բարբառների միջեւ առանձնացնում է խոսվածքների մի երրորդ խումբ, որը պայմանականորեն կոչում է կենտրոնական: Հատկանշական է, որ Ղուբայի բարբառով խոսող առանախոս բնակչութիւնը կրոնով սուննի է, իսկ «կենտրոնական» եւ Խիզիի բարբառները կրող առանախոսները չիա են⁶⁵:

Նոր առաներենի կրողների բնակության շրջանները. Թյուրքերեն լեզվի բոլոր տարածման հետեւանքով Ի. դարում նոր առաներեն լեզուն խոսվում էր միայն ԺԱՀ եւ Դաղստանի առանձին շրջաններում՝ Ապշերոնյան թերակղզում (Բալախանի, Սուրախանի, Մաշտաղի եւ մի քանի այլ մանր բնակավայրերում, Բաքվի շրջակայքում), Կովկասյան լեռների արեւելյան վերջավորութիւնների լանջերին՝ ԺԱՀ հյուսիս-արեւելքում (Խիզիի, Սիա-

⁶¹ «Очерк по истории изучения иранских языков», М. 1962, с. 141.

⁶² Б. В. Миллер, Татские тексты, 1945, с. 107.

⁶³ В. С. Соколова, Татский язык, 1953, с. 122. А. Л. Грюнберг, Язык североазербайджанских татов, 1963, с. 3.

⁶⁴ «Jeremiás E. La langue Tāt», Encyclopédie de l'Islam, nouvelle édition (par P. J. Bearman, Th. Bianquis, C. E. Bosworth, E. van Donzel, W. P. Heinrichs), 2002, t. X, p. 396.

⁶⁵ А. Л. Грюнберг, Язык североазербайджанских татов, 1963, с. 8.

զանի, Ղոնաղքենդի, Դիվիչի, Ղուբայի, Իսմայիլիի շրջաններում, Ղուբա քաղաքում), Դաղստանի եւ Հյուսիսային Կովկասի որոշ քաղաքներում (Դերբենտ, Մախաչկալա, Բուլնակսկ, Գրոզնի, Նալչիկ)⁶⁶, Դաղստանի Կայ-թագ-Թաբասարանի շրջանում⁶⁷:

Նոր առաներենի տարածման շրջանը, փաստորեն, հիմնականում համապատասխանում է նոր ժամանակների Շիրվան երկրամասին՝ նրա լայն ընդգրկմամբ: Աղբբեջանական նոր պատմագրության համաձայն՝ Շիրվանի մեջ մտնում են նախկին Առանի (Աղուանքի) տարածքները՝ Կուր գետի ձախափնյակում, ինչպես նաեւ Կասպից ծովի եւ Կովկասյան լեռների միջեւ գտնվող շրջանները մինչեւ Դերբենտ⁶⁸: Սա մոտավորապես համապատասխանում է վաղմիջնադարյան Աղուանից կաթողիկոսներին ենթակա շրջատարածքին:

ԺԹ. դարի առաջին կեսին աղբբեջանական պատմագրության հիմնադիր համարվող Աբաս Ղուլի-աղա Բաքիխանովը գրում է, որ Դաղստանում՝ Դերբենտի մոտ գտնվող ութ գյուղերում (Ջալկան, Ռուկալ, Կոմախ, Մագատիր, Զիդնան, Գումեյդի, Մութաղի եւ Բիլխադի), «խոսում են թաթերի լեզվով՝ հին պարսկերենի բարբառներից մեկով»: Նույն հեղինակի տեղեկության համաձայն՝ այդ լեզվով է խոսում նաեւ Ղուբա եւ Շամախի քաղաքների միջեւ գտնվող տարածքների ամբողջ բնակչությունը, ինչպես եւ Բաքվի շրջանը՝ բացառությամբ վեց թուրքմենական գյուղերի⁶⁹: Ինչպես տեսնում ենք, հենց «աղբբեջանական» աղբբյուրներն իրենք էլ խոստովանում են, որ առանախոս բնակչությամբ տարածքները հնում չատավելի մեծ եւ հոծ են եղել:

Ի. դարի կեսերին արդեն ԺԱՀ Հյուսիս-արեւելքում, այն է՝ առանախոս բնակչության համախումբ բնակչության վայրերում նրանց զբաղեցրած տարածքի առավելագույն երկայնքը 90 կմ է, իսկ լայնքը՝ 30 կմ⁷⁰: Առանախոսների թվաքանակը նույնպես զգալիորեն կրճատվել էր: Ըստ Ա. Լ. Գրյունբերգի՝ 20-րդ դարի կեսերին Կովկասում մոլոսովման-թաթերի թվաքանակը մոտավորապես 20-30 հազար էր, ընդ որում՝ այդ թիվը խիստ դժվար էր որոշակիացնել, քանի որ առանախոս բնակչության մեծ մասը երկրեզու էր՝ առաներենի հետ միասին տիրապետում էր նաեւ թյուրքերենին, իսկ բազմաթիվ առանական բնակավայրեր ընդհանրապես դարձել էին թյուր-

⁶⁶ Անդ, էջ 3.

⁶⁷ И. М. Оранский, Введение в иранскую филологию, Москва, 1960, с. 326.

⁶⁸ А. Бакиханов, Гюлистан-и Ирам, Баку, 1991, с. 12.

⁶⁹ Անդ, էջ 24:

⁷⁰ А. Л. Грюнберг, Язык североазербайджанских татов, 1963, с. 4.

քախոս: Թյուրքերեն լեզվի ազդեցությունը նկատելի է թե՛ հայ-առաներենի, թե՛ հրեա-առաներենի եւ թե՛ մուսուլման-առաներենի վրա⁷¹:

Միայն Շամախու շրջանում այսօր էլ կան մի քանի տասնյակ գյուղեր, որոնց բնակչությունը թեեւ ներկայումս թյուրքախոս է, սակայն գյուղանունները բացատրվում են նորառանական արմատներով⁷²: Ապշերոնի թերակղզու բազմաթիվ տեղանուններ նույնպես ստուգաբանվում են իրանական արմատներով⁷³: ԺԱՀ բոլոր ազգային փոքրամասնություններից, թերեւս, թյուրքացման գործընթացը առավել ուժգնորեն տեղի է ունեցել առանախոս բնակչության մեջ⁷⁴. այդ է պատճառը, որ հաճախադեպ են նորառանական տեղանունները, որոնց բնակիչներն արդեն չեն հասկանում եւ չգիտեն իրենց բնակավայրերի անվանումների ստուգաբանությունը:

Ա. Լ. Գրյունբերգը 1963 թ. իր գրքում բերում է ԺԱՀ բոլոր առանախոս բնակավայրերի անվանումները՝ ըստ առանաբնակ հինգ շրջանների. այդ ցուցակում նա թվարկում է 96 գյուղ: Սակայն, արդեն 1982 թ. «Իրանական լեզվաբանության հիմունքներ» գրքում հիշատակվող առանախոս բնակավայրերի թիվը զգալիորեն ավելի քիչ է. նշվում է ընդամենը 10 գյուղի անուն, ինչպես եւ Վարդաշեն, Ղուբա, Դիվիչի, Սիազան, Դերբենտ, Մախաչկալա, Բուլնակսկ, Ղզլար, Խասավյուրտ, Նալչիկ, Մոզդուկ, Գրոզնի քաղաքները⁷⁵: 1970 թ. մարդահամարի տվյալներով՝ «կովկասյան թաթերի» ընդհանուր թիվը կազմում էր 17 հազար, ընդ որում՝ դրանց մեջ մտնում էին նաեւ հրեա-առաներեն եւ հայ-առաներեն խոսող ազգազրական խմբերը: Սակայն նշված տվյալները Ա. Գրյունբերգի եւ Լ. Դավիդովայի կողմից համարվում են խիստ փոքրացված, քանի որ ԺԱՀ թաթերի մեծ մասն արդեն իրեն համարում էր ազգություն մը ազրբեջանցի:

Քրիստոնյա առանախոսների բնակության շրջանները. Ինչ վերաբերում է հայ-առաներենի լեզվակիրներին կամ առանախոս հայերին, ապա նրանք նույնպես մինչեւ ԺԸ. դարը, ըստ ճանապարհորդների ու ականատեսների հաղորդած տեղեկությունների, շատ ավելի ընդարձակ տարածքներ էին զբաղեցնում: Հայ-թաթերն ունեին բազմաթիվ բնակավայրեր Դերբենտի, Ղուբայի, Մոլչկուրի, Գյոզչայի գավառներում:

⁷¹ Անդ, էջ 4-5:

⁷² Г. Гейбуллаев, Топонимия Азербайджана, Баку, 1986, с. 107.

⁷³ Անդ, էջ 109:

⁷⁴ Г. А. Гулиев, Таты, Народы Кавказа (под общ. ред. С. П. Толстова), т. II, М. 1962, с. 186.

⁷⁵ А. Л. Грюнберг, Л. Х. Давыдова, Татский язык, Основы иранского языкознания: новоиранские языки (западная группа, прикаспийские языки), Москва, 1982, с. 231.

1718 թ. ռուսական աղբյուրներում հիշատակվում են հայ-թաթերի խաչմաս եւ Նուգդի գյուղերը: Այս նույն տարիներին Դերբենտից Մարտիրոս Վարդապետը նամակ է հղում Վրաց Վախթանգ VI (1716-1724) թագավորին, որտեղ նկարագրում է Մուշկուրի 12 «հայկական» գյուղերի ծանր վիճակը: Իրականում այդ տասներկու գյուղերը բնակեցված էին առանախոս քրիստոնյա բնակչությամբ: Նամակում նշվում են այդ տասներկուսից միայն ութի անունները՝ Ղարաղուրթլու, Մալախալիլ (= Մուլա Խալիլ), Նուկդի, Փատարմեկ, Վանամիր, Մուսուրման Պարախում, Ղարաջալու, Արմանի Պարախում⁷⁶:

1796 թ. Ռուսաստանի՝ Հարավային Կովկաս կատարած արշավանքի կապակցությամբ օգնություն խնդրանքով ռուսներին է դիմում Հովսեփ արքեպիսկոպոս Արղուիթյանը: Նա գրում է Դերբենտի եւ Մուշկուրի ինը «հայկական», այն է՝ հայ-առանական գյուղերի անունից, որոնց թվում նշվում են Խաչմասը, Ղարաջալուն, Մեծ եւ Փոքր Պարախումները (= Մուսուրման Պարախում եւ Արմանի Պարախում), Քիլվարը, Ղարաղուրթլուն, Ազատողին, Մուլախալիլը եւ Նուգդին:

Փաստորեն, նշված աղբյուրների (1710-ական թթ. եւ 1796 թ.) համադրմամբ՝ հիշատակված 12 հայ-առանական բնակավայրերից կարելի է վերականգնել 11-ի անունները.

1710-ականներ	1796
–	Ազատողի
Խաչմաս	Խաչմաս
Ղարաղուրթլու	Ղարաղուրթլու
Ղարաջալու	Ղարաջալու
Մալախալիլ	Մուլախալիլ
Նուգդի / Նուկդի	Նուգդի
Պարախում (Մուսուրման)	Մեծ Պարախում
Պարախում (Արմանի)	Փոքր Պարախում
Վանամիր	–
Փատարմեկ	–
–	Քիլվար

Սրանցից ամենահայտնին Մուլա Խալիլ գյուղն է, որտեղ գտնվում էր Գրիգոր Լուսավորչի թոռան՝ մասքութների կողմից նահատակված հայ

⁷⁶ Ա. Յակոբեան, Հայ-թաթերի տարաբաշխումության ու տեղահանությունների պատմությունից (18-րդ դ. սկիզբ - 19-րդ դ. վերջ), ՀՀՀՄ, 2001, հ. 31, էջ 126:

եպիսկոպոս Գրիգորիսի մատուռը. այս բնակավայրը թյուրքերեն կոչվում էր նաեւ Փիրի-քենդ⁷⁷, այսինքն՝ «Սուրբի շեն»: Այլ աղբյուրներում եւս Դերբենտի, Մուշկուրի, Ղուբայի շրջաններում հիշատակվում են Քրիստոնեական Առաքելական Եկեղեցուն պատկանող բնակչությամբ գյուղեր՝ Բեբելի, Բիլիջի, Ուլվար, Խաշնի, Սպիք, Ղասմբյանդ, Թալաբի (Ներքին եւ Վերին), Դիխան (Օհանխան), Պողոսբյանդ⁷⁸:

ԺԸ. դարի վերջին՝ 1797 թ. զորավար Զուբովի արշավանքի ժամանակ, ռուսական զորքերի հետ քաշվելուց հետո, հազարավոր առանախոս եւ թյուրքախոս հայեր գաղթեցին Ռուսաստանի սահմաններ եւ բնակություն հաստատեցին Հյուսիսային Կովկասի հետեւյալ քաղաքներում՝ Մոզդուկ, Ղզլար, Պետրովսկի (= Մախաչկալա), Մաճառ (=Սուրբ Խաչ կամ Բուդյոնովսկ), Ղուրա (=Կասաեւ Յամա կամ Նոր Եդեսիա), Աստրախան⁷⁹, Տուապսե, Անապա⁸⁰ եւն:

Կրոնափոխության եւ գաղթերի հետեւանքով ԺԹ. դարի վերջին ԺԱՀ տարածքում մնացել էր առանախոս հայերի միայն երեք բնակավայր՝ Մադրասան (Շամախու շրջանում), Քիլվարը (Դիվիջիի շրջանում) եւ Խաչմասը (Ղուբայի շրջանում), որոնք էլ հենց մշտապես հիշատակվում են նոր ժամանակների լեզվաբանական գրականության մեջ: Խաչմասը, սակայն, գոյատեւեց միայն մինչեւ 1918 թ.:

ԺԹ. դարի կեսին Ս. Զալալյանցը, Մուլա Խալիլ գյուղից անտառների միջով հասնելով Խաչմաս, գրում է, որ «քնակիչք են Հայք, զունք յիսուն»⁸¹: Մի քանի տասնամյակ անց Խաչմասի քրիստոնյա բնակչությունը զգալիորեն նվազում է: ԺԹ. դարավերջին Մակար Բարխուտարեանցը, այցելելով նշված շրջաններ, գրում է, որ Խաչմաս գյուղը գտնվում է Ղուբայից 4 ժամվա հեռավորության վրա՝ մի գետակի երկու ափերին: Ընդ որում, այդ գետակի աջ ափին բնակվում էին «հայերը», իսկ ձախ ափին՝ «սուլունի եւ չիա մահմեդականները»: Բարխուտարեանցի այցելության ժամանակ Խաչմաս գյուղի

⁷⁷ Հ. Մարաղեան, Սուրբ Գրիգորիս Աղուանից Կաթողիկոսի մատուռը, «Նոր դար» օրաթերթ, 1891, թ. 5, էջ 2:

⁷⁸ Ռ. Երզնկեանց, Գերեզմանատուն հայոց մերձ ի գիւղն Բիլջի, «Մեղու Հայաստանի», 1859, թ. 2, էջ 12-14. Ա. Յակոբեան, Հայ-թաթերի տարաբաշխութեան ու տեղահանութիւնների պատմութիւնից, էջ 128-129:

⁷⁹ Н. Волкова, О расселении армян на Северном Кавказе до начала XX в., ИФЖ, 1966, №3, с. 260. Р. Симонян, Едессия-Эдиссия (историко-этнографический очерк), Минеральные воды, 1998, с. 41-51.

⁸⁰ Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, с. 14.

⁸¹ Ս. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Բ., Տիփլիս, 1858, էջ 419:

ամբողջ ժողովուրդը թյուրքախոս էր. «Այժմ տաճկերէն է խօսում ժողովուրդս, վասն որոյ ճարահասրեալ մի քանի քարոզներ խօսեցի տաճկերէն լեզուով եւ միսի-թարեցի»: ԺԹ. դարի վերջին գյուղում կար 194 հոգի (32 ծուխ) հայադավան բնակիչ, որոնք, ինչպես երեւում է, բոլորն էլ թյուրքախոս էին⁸²:

1928 թ. Բ. Միլլերին չի հաջողվում պարզել՝ արդյոք դեռեւս կա Ղուբայի շրջանում առանախոս հայերի խաչմաս գյուղը: Ընդ որում, այս խաչմասը չպետք է չփոթել Կուսարի շրջանի համանուն բնակավայրի հետ, որտեղ բնակվում էին թյուրքախոս առաքելական քրիստոնյաներ, Միլլերի խոսքերով՝ «հայ-գրիգորյաններ, որոնք խոսում են թյուրքերեն»⁸³:

Ինչ վերաբերում է Քիլվարին, ապա Մակար Բարխուտարեանցի վկայությամբ՝ այդ գյուղը ԺԹ. դարի վերջին ուներ 420 «հայ» բնակիչ (100 ծուխ), որոնք խոսում էին «Լփնաց բարբառով»: Առհասարակ, համաձայն Բարխուտարեանցի, Ղուբա գետից մինչեւ Ապշերոնի թերակղզի խոսում էին այդ նույն բարբառով, սակայն ամենքը գիտեին նաեւ թյուրքերեն⁸⁴: Քիլվարի «հայերի» մեջ նույնպես Բարխուտարեանցը ստիպված իր քարոզը կարդում է «տաճկերեն»: Մ. Բարխուտարեանցի տվյալներով՝ Սումգայիթ գետից մինչեւ Ղուբա գետը ընկած շրջաններում կային մոտ 80 հազար բնակիչներ, որոնց նախնիները դեռ ոչ վաղ անցյալում հայադավան էին⁸⁵: 20-րդ դարի սկզբին արդեն Կովկասի առանախոս բնակչության 95 %-ը մուսուլման էր⁸⁶:

ԺԹ. դարավերջին Մադրասա գյուղը, որոշ տվյալների համաձայն, ուներ «300-ի չափ հայազգի գերդաստուն»⁸⁷, իսկ այլ տվյալներով՝ 2780 բնակիչ (483 ծուխ), որոնք, ըստ Մակար Բարխուտարեանցի, «խոսում են պարսկերեն քարբառով, որ մերձավորություն ունի Լփնաց կամ Լաիճաց քարբառին: Սակայն ամենքը գիտեն հայերեն»⁸⁸: 1928 թ. տվյալներով՝ Մադրասան ուներ 659 տնտեսություն եւ 3120 բնակիչ⁸⁹: Ըստ պահպանված մի ավանդույթյան՝ Մադրասա է կոչվել նաեւ Ապշերոնի թերակղզու առանաբնակ Բուզովնա գյուղը. սա հիմք է տվել մի ենթադրության, թե Շամախու շրջանի Մադրա-

⁸² Մ. Բարխուտարեանց, Ադուանից երկիր եւ դրացիք (միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 130, 133:

⁸³ Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, с. 13.

⁸⁴ Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 139-140:

⁸⁵ Անդ, էջ 146:

⁸⁶ М. Матагов, К вопросу о татском этносе, Советская этнография, 1981, № 5, с. 109.

⁸⁷ Դ. Շահնազարեան, Այցելություն եկեղեցեաց գիւղօրէից վիճակին Հայոց Շամախույ, «Արարատ», 1871, մարտ, էջ 352:

⁸⁸ Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 167:

⁸⁹ Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, с. 9.

սայի առանախոս բնակչությունը Ապշերոնից է գաղթել դեպի Հյուսիս⁹⁰: Այդուհանդերձ, նմանատիպ գաղթի վերաբերյալ որեւէ պատմական հիշատակություն չկա:

Նույն՝ Շամախու շրջանում գտնվող Հնդար գյուղի մասին պատմվում էր, թե նրա երեք թաղերից երկուսը ամբողջովին հայախոս էին, իսկ երրորդ՝ Վերին թաղի ժողովուրդը, «Լփնաց կողմից գաղթած է...», որ բացի հայերէնից պահած է ցարդ եւ իւր նախնի բարբառը⁹¹:

Ի. դարի կեսին արդեն մնացել էր հայ-առաններեն լեզվով խոսող ընդամենը երկու բնակավայր՝ Շամախու շրջանի Մադրասա եւ Դիվիչիի շրջանի Քիլվար գյուղերը⁹²: 1988-89 թթ. Արցախյան պատերազմի սկզբին ԺԱՀ հայ բնակչության տեղահանման ժամանակ գաղթեցին նաեւ Մադրասա եւ Քիլվար գյուղերի առանախոս հայերը: Նրանց մեծ մասը հեռացավ Ռուսաստան (մասնավորապես՝ Հյուսիսային Կովկաս) եւ Ուկրաինա, իսկ մի մասը ներգաղթեց Հայաստանի Հանրապետություն եւ հիմնեց Նոր Մադրասա կամ Դպրեվան գյուղը Արագածոտնի մարզում:

Նոր առաններեն խոսողների թվաքանակը. Ներկայումս խիստ դժվար եւ գրեթե անհնար է տալ նոր առաններեն խոսողների կամ, այսպես ասած, թաթախոս բնակչության (անկախ նրանց կրոնական պատկանելությունից) գոնե մոտավոր թվաքանակը: Դա ոչ միայն նրանց ցրվածության եւ բազմաթիվ գաղթերի ու վերաբնակեցումների, այլեւ հետեւյալ երեք հանգամանքների պատճառով է.

1. մուսուլման-թաթերն արդեն վաղուց մեծ մասամբ երկլեզու են, ազատ տիրապետում են թյուրքերենին եւ մարդահամարների ժամանակ էլ հաճախ հենց իրենք ներկայանում են որպես ադրբեջանցի:

2. հրեա-թաթերը, քաղաքական եւ այլ նկատառումներից ելնելով, հաճախ համարվել են հրեաներ, նույնիսկ միավորվել են էթնո-լեզվաբանական եւ ազգագրական տեսանկյունից բոլորովին տարբեր՝ Վրաստանի հրեաների հետ մեկ խմբի մեջ՝ որպես «Կովկասի հրեաներ»: Անգամ որոշ վիճակագրական տեղեկություններում Դաղստանում եւ Ադրբեջանում զուգահեռ հանդես են գալիս «հուդայական թաթերը» եւ «լեռնական հրեաները». վերջիններս, ի դեպ, նույնպես առանախոս են (սա վկայում է նույն ազգագրական խմբի երկակի ինքնագիտակցության մասին):

⁹⁰ Ե. Տէր-Յովհաննիսեանց, Ս. Եղիայի վանքը Բուզովնում, «Արարատ», 1902, մայիս-հունիս, 481:

⁹¹ Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 181:

⁹² Ս. Ղալթախյան, Համառոտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին, էջ 85:

3. Հայ-թաթերը, լրիվ կտրվելով իրենց պատմա-ազգագրական միջավայրից եւ ստիպված գաղթելով այլ երկրներ, բոլոր մարդահամարներում նշվում են որպես հայեր:

1886 թ. տվյալներով՝ միայն Բաքվի գավառում բնակվում էին 58.621 «թաթեր»⁹³: ԺԹ. դարի վերջի տվյալներով՝ թաթերը միայն ԺԱՀ տարածքում կազմում էին մոտ 125 հազար մարդ. Անդրկովկասյան երկրամասի վերաբերյալ վիճակագրական տեղեկությունների համաձայն (Թիֆլիս, 1893)՝ թաթերը Բաքվի նահանգում հաշվվում էին 118.165 հոգի, իսկ «Կովկասյան օրացույցի» համաձայն (Кавказский Календарь на 1894 г.)՝ 124.693 հոգի⁹⁴:

1901 թ. Մեծ ռուսական հանրագիտարանը առանախոս բնակչության ընդհանուր թիվը նշում է 135 հազար⁹⁵: Մինչդեռ, օրինակ, 1926 թ. մարդահամարի տվյալներով՝ իրենց թաթ են կոչել 38.713 մարդ, որոնցից 28.443-ը՝ թաթ-մուսուլման, իսկ 10.270-ը՝ լեռնական հրեաներ. ընդ որում, իրենց մայրենի լեզվով թաթ են համարվել 73.913 մարդ: Եվս 11.755 մարդ իրենց մայրենի լեզուն անվանել են պարսկերենը⁹⁶ (հարկ է ճշտում մտցնել՝ Փարսի կամ փարսի, որը նույն նոր առաներենն է): Այդպիսով, ըստ 1926 թվի մարդահամարի՝ առանախոս բնակչության քանակը հասնում էր 85 հազարի:

Սակայն, ինչպես նշում է Բ. Միլլերը, այդ մարդահամարը կատարվել է բավական կոպիտ սխալներով ու թերացումներով: Օրինակ, միայն Նիզիի շրջանում, որի բնակչության մեծ մասը առանախոս է, կար 36 թաթական գյուղ՝ 13.064 բնակչությամբ, այնինչ՝ 1926 թ. մարդահամարի տվյալներով այստեղ նշվում է ընդամենը 5.910 առանախոս բնակիչ՝ այսինքն ավելի քան երկու անգամ քիչ⁹⁷: Միլլերի կարծիքով՝ առանախոս բնակչության թվաքանակը 1929 թ. իրականում գերազանցել է 100 հազարը, դրանում նա համոզվել է՝ անձամբ շրջագայելով առանաբնակ գյուղերով ու քաղաքներով:

1959 թ. մարդահամարի տվյալներով՝ թաթերի թվաքանակը ԺԱՀ-ում արդեն ընդամենը 11 հազար էր⁹⁸:

Ինչ վերաբերում է հրեա-թաթերին, ապա նրանք Դադստանում 1857 թ. հաշվվում էին 6.111 հոգի, 1875 թ.՝ 5.389: 1886 թ. Անիսիմովի կողմից հավաքած տվյալների համաձայն՝ «լեռնական հրեաների» թիվը 21 հազար էր, որոնցից կեսից ավելին բնակվում էր քաղաքներում (11 հազար), իսկ 1929 թ.

⁹³ V. Minorsky, Tāt, p. 699.

⁹⁴ Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, с. 4.

⁹⁵ V. Minorsky, Tāt, p. 699.

⁹⁶ Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, с. 5.

⁹⁷ Անդ, էջ 6:

⁹⁸ Г. А. Гулиев, Таты, с. 181.

դրույթյամբ՝ «լեռնական հրեաները» կազմում էին 26 հազար հոգի. դրանցից 10.270-ը բնակվում էր ԺԱՀ-ում⁹⁹: Հետագա տարիներին նույնպես «առանախոս հրեաների» թվաքանակը աստիճանաբար աճել է, ըստ Ա. Բիհանի տեղեկությունների՝ նրանք կազմում էին 30 հազար¹⁰⁰: Նոր տվյալների համաձայն՝ հրեա-առաներեն խոսող բնակչությունը կամ, այսպես կոչված, «լեռնական հրեաները» ԺԱՀ-ում կազմում են 35 հազար, ըստ որում՝ նրանք հիմնականում բնակվում են Բաքու քաղաքում, Ղուբայից ոչ հեռու գտնվող Կրասնայա Սլոբոդա բնակավայրում եւ Օդոլզ (Վարդաշեն) շրջկենտրոնում¹⁰¹:

Նոր առանների լեզվական փարբերակների հիմնական առանձնահատկությունները. Նոր առաներենի երեք լեզվական տարբերակները՝ մոսուլման-առաներենը, հրեա-առաներենը եւ հայ-առաներենը, չնայած որոշակի բարբառային տարբերություններին, բավական մոտ են իրար եւ հասկացվում են միմյանց կողմից: Այսպես, Ապշերոնի առանախոս բնակչության հավաստմամբ՝ իրենք չատ լավ հասկանում են ոչ միայն Խիզիլի եւ Ղուբայի շրջանների առանախոս մոսուլմաններին, այլեւ Ղուբայի հրեաներին եւ նույնիսկ Մադրասայի հայերին (Շամախու շրջան): Միեւնույն ժամանակ, հենց նույն Շամախու շրջանի Լահիջ գյուղի մոսուլման առանախոս բնակչության բարբառը բավական խրթին եւ դժվարմբռնելի է Ապշերոնի թաթերի համար¹⁰²:

Վ. Միլլերը նշում է «լահիջերենում» առաջնաքմայինների (ետնալեզվայինների) պալատալիզացիայի (քմայնացման) մասին¹⁰³: Այս տարբերությունները, հնարավոր է, որ բացատրվեն լահիջիների այլեթնիկ ծագման վարկածով: Լահիջիների մի խումբ էլ, որն իրեն անվանում է լայջի, Ի. Գարի սկզբին, սոցիալական ծանր պայմանների հետեւանքով, Գյոբչայի շրջանի իր հայրենի Լահիջ գյուղից վերաբնակվել է Վրաստանի Հանրապետության Սաբարեջոյի շրջանի Գոնբորի գյուղում եւ մինչ օրս պահում է իրանական բարբառը¹⁰⁴:

Հետաքրքիր է, որ խիզինցի առանախոսները Քիլվար գյուղի քրիստոնյա առանախոս բնակչությանը անվանում էին «հայեր» եւ նշում, որ իրենք չատ լավ հասկանում են նրանց խոսվածքը: Սակայն, օրինակ, նույն խի-

⁹⁹ Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, с. 17.

¹⁰⁰ А. Byhan, La civilisation caucasienne, Paris, 1936, p. 227.

¹⁰¹ А. Мамедов, Некоторые аспекты современной этнической ситуации в Азербайджане, Центральная Азия и Кавказ (общественно-политический журнал), 1999, № 5 (6), с. 52.

¹⁰² Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, с. 6.

¹⁰³ В. Ф. Миллер, Татские этюды, часть II, с. 14-15.

¹⁰⁴ М. И. Квачадзе, Речь гомборских лайджей (диссертация на соискание ученой степени кандидата филологических наук), Тбилиси, 1990.

զինքները վատ էին հասկանում լահիջիներին եւ «Ղուբայի հրեաներին», բայց պարսից լեզուն համարում էին իրենց «եղբայր» (քարդաշ)¹⁰⁵: Ի տարբերություն խիզինցիների, Ղուբայի շրջանի առանախոսները (օրինակ՝ Ռուստով գյուղի բնակիչները) պնդում էին, որ իրենք, լավ հասկանալով խիզինցիներին ու ապշերոնցիներին, կարողանում են բացատրվել նաեւ լահիջիների հետ, թեեւ վերջիններս ունեն «իրենց բառերը»¹⁰⁶:

Իրենք՝ լահիջիները, լավ հասկանում էին ապշերոնցիներին, մի քիչ ավելի դժվարությամբ՝ ղուբացիներին եւ խիզինցիներին: Թեեւ լահիջիները Մադրասայի առանախոսների հետ բնակվում էին նույն՝ Շամախու շրջանում, սակայն գտնում էին, որ Մադրասայի հայերի խոսվածքը դժվարեմբռնելի է իրենց համար. ի տարբերություն իրենց խոսվածքի՝ լահիջիները Մադրասայի առանները թյուրքերեն կոչում էին «Ֆարս դիլի», այսինքն՝ ֆարսերեն¹⁰⁷: Լոպատինսկին ժամանակին նշում էր Մադրասայի հայաառաներենի որոշ հնչյունական առանձնահատկությունների մասին, որոնք, սակայն, չի ընդունում Բ. Միլլերը¹⁰⁸:

Մադրասացիներն, ինչպես հայտնի է, իրենք իրենց լեզուն կոչել եւ կոչում են փարսերեն¹⁰⁹ կամ փարսի եւ գտնում են, որ այն տարբեր է մնացած բոլոր նորառանական խոսվածքներից: Հետաքրքիր է, սակայն, որ Ապշերոնյան թերակղզու Բալախանի եւ Սուրախանի ավանների բնակիչները նույնպես մինչեւ այսօր իրենք իրենց անվանում են փարս¹¹⁰:

Մադրասացիների եւ քիվարցիների նորառաններն խոսվածքները, որոշակի տարբերություններով հանդերձ, հասկանալի էին միմյանց: Ընդ որում, թե՛ մադրասացիները, թե՛ քիվարցիները համոզված էին, որ հենց իրենց գյուղի բարբառն է ամենամաքուրը մնացել՝ զերծ թյուրքական ազդեցություններից: Այդուհանդերձ, քիվարցիների մեծ մասը երկլեզու էր եւ ազատ տիրապետում էր նաեւ թյուրքերենին: Իրար միջեւ, սակայն, քիվարցիներն ու մադրասացիները հաղորդակցվում էին առաններեն, ինչի ականատեսն է եղել Բ. Միլլերը: Սա խոսում է այն մասին, որ քիվարցիները դժվարությամբ էին խոսում հայերեն, թեեւ նրանց մի մասը որոշ չափով

¹⁰⁵ Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, с. 7.

¹⁰⁶ Ասդ, էջ 8:

¹⁰⁷ Ասդ, էջ 11:

¹⁰⁸ Ասդ, էջ 27:

¹⁰⁹ Ս. Պ. Էֆենդյան, Մադրասացիների երկլեզվության հարցի շուրջ, ԼՀԳ, 2004, թ. 1 (160), էջ 90:

¹¹⁰ А. Мамедов, Некоторые аспекты современной этнической ситуации в Азербайджане, с. 55.

տիրապետում էր հայոց լեզվին: Մադրասացիներն, ընդհակառակը, ազատ հաղորդակցվում էին նաեւ հայերեն¹¹¹:

Սակայն Մադրասա գյուղի ծեր մարդիկ ասում էին, որ իրենց պապերն առհասարակ հայերեն չեն իմացել, թեպետ հաճախել են հայկական եկեղեցի եւ պաշտել «Գրիգոր Լուսավորչի կրօնը»: Ի. դարի կեսին Մադրասայում հայերեն չիմացող այլեւս չկար, սակայն Ս. Ղալթախչյանը ականատես է եղել դեպքերի, երբ որեւէ մադրասացի հայերեն դժվարացել է արտահայտվել եւ իր միտքը լրացնելու համար դիմել է առաներենին¹¹²: 1968 թ. նա նկատել է, որ դեռեւս քիչ չեն այն ընտանիքները, որոնց մանուկները վարժ խոսում են հայ-առաներեն: Սակայն հասարակական վայրերում մադրասացիներն այլեւս առաներեն չէին խոսում¹¹³:

Հայերենին տիրապետում էր նաեւ առանախոս հրեաների այն հատվածը, որը բնակվում էր Վարդաշենում: Բ. Միլլերի հավաստմամբ՝ Վարդաշենի «լեռնական հրեաների» 60 տոկոսը գիտեր նաեւ հայերեն, իսկ 10 տոկոսը՝ ուտիերեն¹¹⁴:

РЕЗЮМЕ

Татский Кавказа или новоарранский язык - один из современных юго-западно-иранских языков, носители которого проживают в юго-восточных горных районах Кавказа, а также в прилегающих к этим районам прибрежных областях Каспийского моря. Указанный регион прежде входил в исторические области Арран и Ширван. Арраноязычное население еще до недавнего времени разделялось на три основные этнографические группы, названные условными терминами, в зависимости от своей религиозной принадлежности: таты-мусульмане, таты-христиане или армяно-таты, и таты-иудеи или еврей-таты.

Арраноязычные этнографические группы никогда не имели общего самоназвания, следовательно их маркирование под названием татлишь условно принято в современной науке. Учитывая эти факты, а также пейоративное происхождение термина тат, в статье предлагается новый научный термин для языка - новоарранский, и для его трех вариантов - мусульмано-арранский, армяно-арранский, еврейско-арранский. Примечательно, что между этими тремя вариантами новоарранского языка есть значительные фонетические и грамматические расхождения.

¹¹¹ Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, с. 16.

¹¹² Ս. Ղալթախչյան, Համառոտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին, էջ 86:

¹¹³ Ս. Ղալթախչյան, Հայերենի տարրերը հայ-թաթերեն բարբառներում, էջ 73:

¹¹⁴ Б. В. Миллер, Таты, их расселения и говоры, с. 18.

История новоарранского и его носителей туманна: согласно одному предположению, арраноязычные группы являются потомками остатков военных отрядов, обосновавшихся на Кавказе в Сасанидскую эпоху. Однако нет никаких достоверных письменных источников относительно происхождения кавказских татов или их формирования ни как отдельной этнической группы, ни как трех различных этнографических групп. Именно поэтому многостороннее исследование новоарранского языка и не-малочисленных его диалектов приобретает первостепенное значение.

В статье приводится краткая история изучения новоарранского (татского) языка, начиная с первых европейских сведений, автором которых был польский путешественник Ян Потоцкий, до лингвистических исследований советских и современных западных и южнокавказских ученых.

SUMMARY

Tat of the Caucasus or Modern Arranian is one of nowadays' south-western Iranian languages. It is spoken in southeastern mountainous regions of the Caucasus, as well as in the adjacent coastal areas of the Caspian Sea. The mentioned area was formerly part of the historical regions named Arran and Shirvan. Arranian-speaking population up to recent times was divided into three principal ethnographical groups which were called according to their religion by conditional terms Muslim Tats, Christian Tats or Armenian Tats, and Judaic Tats or Jewish Tats.

Arranian-speaking ethnographical groups have never had a general autonym hence their definition as Tats is only conditionally accepted by modern researchers. Taking into consideration these facts, as well as the pejorative origin of the term Tat, we offer in our paper a new scientific term for this language - Modern Arranian, and for its three variants - Muslim Arranian, Armeno-Aranian and Judeo-Arranian. It is noteworthy that there are considerable phonetical and grammatical differences between these variants of Tat (Modern Arranian) language.

The history of Modern Arranian language and its speakers is vague; according to one hypothesis, the Arranian-speaking groups are descendants of the remnants of military units settled down in the Caucasus during the Sassanid era. However, there are no reliable written sources concerning the origin of the Caucasian Tats or their formation neither as a separate ethnic group, nor as three distinct ethnographical groups. That is why the multilateral research of Modern Arranian language and its various dialects is of paramount importance.

The paper gives a brief history of the study of Modern Arranian (Tat) language since the first European information provided by a Polish traveler Jan Potocki, to linguistic studies of Soviet and contemporary Western and South-Caucasian scholars.

